# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, 3-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 4,
getamej.kotayq@mta.gov.am

N 183
*18 դեկտեմբերի 2015թ.*

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գուլոյան.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջի, Ձեզ է ուղարկվում Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 11 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 34 էջ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Կ. Սարգսյան*
*094197272*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 28-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N 26-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. 2016 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:
3. 2016 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին:
4. 2016 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. 2016 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

6. 2016 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 29-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 26-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի հատված 6-ի՝

ա. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1003,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

բ. 3112 տողի՝ «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1003,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

գ. 3110 տողի՝ «ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1003,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

դ. 3100 տողի՝ «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «1003,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ե. 3071 տողի՝ «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «500,0» թիվը փոխարինել «60,0» թվով.

զ. 3071 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «500,0» թիվը փոխարինել «60,0» թվով.

է. 3071 տողի՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «500,0» թիվը փոխարինել «60,0» թվով.

ը. 3070 տողի՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «500,0» թիվը փոխարինել «60,0» թվով.

թ. 3000 տողի՝ «Սոցիալական պաշտպանություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «500,0» թիվը փոխարինել «60,0» թվով.

ժ. 2824 տողի՝ «-Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «250,0» թիվը փոխարինել «150,0» թվով.

ժա. 2824 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «2150,0» թիվը փոխարինել «2050,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժբ. 2824 տողի՝ «Այլ մշակութային կազմակերպություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «2150,0» թիվը փոխարինել «2050,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժգ. 2820 տողի՝ «Մշակութային ծառայություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «2150,0» թիվը փոխարինել «2050,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժդ. 2800 տողի՝ «Հանգիստ, մշակույթ և կրոն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «2150,0» թիվը փոխարինել «2050,0» թվով և 7-րդ սյունակում «300,0» թիվը փոխարինել «200,0» թվով.

ժե. 2641 տողի՝ «Էներգետիկ ծառայություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժզ. 2641 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժէ. 2641 տողի՝ «Փողոցների լուսավորում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժը. 2640 տողի՝ «Փողոցների լուսավորում, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

ժթ. 2600 տողի՝ «Բնակարանային շինարարություն ևկոմունալ ծառայություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «150,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իա. 2511 տողի՝ « -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իբ. 2511 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իգ. 2511 տողի՝ «Աղբահանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իդ. 2510 տողի՝ «Աղբահանում, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իե. 2510 տողի՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «220,0» թիվը փոխարինել «20,0» թվով.

իզ. 2131 տողի՝ «-Մասնագիտական ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «204,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իէ. 2131 տողի՝ «Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «204,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իը. 2130 տողի՝ «Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ և 7-րդ սյունակներում «204,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

իթ. 2111 տողի՝ «-Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «50,0» թիվը փոխարինել «0,0» թվով.

լա. 2111 տողի՝ «-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «200,0» թիվը փոխարինել «114,0» թվով.

լբ. 2111 տողի՝ «-Համակարգչային ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «300,0» թիվը փոխարինել «253,0» թվով.

լգ. 2111 տողի՝ «-Կապի ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «130,0» թիվը փոխարինել «50,0» թվով.

լդ. 2111 տողի՝ «- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» տնտեսագիտական դասակարգման 6-րդ և 7-րդ սյունակներում «0,0» թիվը փոխարինել «2360,0» թվով.

լե. 2111 տողի՝ «այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «17790,0» թիվը փոխարինել «19887,0» թվով և 7-րդ սյունակում «17640,0» թիվը փոխարինել «19737,0» թվով.

լզ. 2111 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «17790,0» թիվը փոխարինել «19887,0» թվով և 7-րդ սյունակում «17640,0» թիվը փոխարինել «19737,0» թվով.

լէ. 2110 տողի՝ «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «17790,0» թիվը փոխարինել «19887,0» թվով և 7-րդ սյունակում «17640,0» թիվը փոխարինել «19737,0» թվով.

լը. 2100 տողի՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այդ թվում՝» տնտեսագիտական դասակարգման հոդվածի 6-րդ սյունակում «18014,0» թիվը փոխարինել «19907,0» թվով և 7-րդ սյունակում «17864,0» թիվը փոխարինել «19757,0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 30-Ա

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել 2016 թվականի բյուջետային տարվա համար համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման հետևյալ կարգը՝

1) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝
ա. մինչև 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.
բ. 30 000 (երեսուն հազար) դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում.

2) համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության

բնագավառներում կամավոր լիազորություններն իրականացնել 2016 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

ա. մինչև 1 000 000 (մեկ միլիոն) դրամ ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 1 000 000 (մեկ միլիոն) դրամից ավել ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 31-Ն

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1
Գետամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 31-Ն որոշումով

*Տեղական տուրքեր*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 80 000 դրամ:

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2 000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2 500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 2 500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5 000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5 000 դրամ.

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 200 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 30 000 դրամ.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար՝ 50 000 դրամ.

5) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝

2 000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝

1 000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 250 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1 000 դրամ.

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000դրամ.

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5 000 դրամ.

11. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000 դրամ.

12. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանել՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Հավելված N 2
Գետամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 31-Ն որոշումով

*Տեղական վճարներ*

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1) մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ.

2) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ 20 000 դրամ, ինչպես նաև 1000 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար լրացուցիչ՝ 10 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ ու աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվող վճարի չափ սահմանել՝ 2 000 դրամ:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0 դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ ամսական 0 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 0 դրամ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 32-Ն

### 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Գետամեջ համայնքում հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 3 000 դրամ.

2. Սահմանել Գետամեջ համայնքում ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժման կամ ապամոնտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման հետ կապված ծառայության վճարների դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի.

3. Սահմանել Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար՝ համաձայն N2 հավելվածի.

4. Սահմանել Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման տրամադրման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար՝ 20 000 դրամ.

5. Սահմանել Գետամեջ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ համաձայն N3 հավելվածի.

6. Սահմանել Գետամեջ համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրաման ծառայության վճար՝ ամսական 500 դրամ:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ

2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ

3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1
Գեղամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 32-Ն որոշման

## ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԿԱՄ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Մինչև 100 մետրի դեպքում | 3 000 |
| 2. | 101-ից մինչև 500 մետրի դեպքում | 5 000 |
| 3. | 501 և ավելի մետրի դեպքում | 10 000 |

Հավելված N 2
Գետամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 32-Ն որոշման

**ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| **1.** | Հողերի օտարման համար | 15 000 |
| **2.** | Ինքնակամ կառույցների օրինականացման և օտարման համար | 15 000 |
| **3.** | Բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման համար | 20 000 |

Հավելված N 3
Գետամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 32-Ն որոշման

## ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| **1.** | ***Շինությունների համար՝*** | |
| 1) | Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 150 |
| 2) | Իրավաբանական անձանց համար՝ 25 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 250 |
| **2.** | ***Հողամասերի համար՝*** | |
| 1) | Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 30 |
| 2) | Իրավաբանական անձանց համար՝ 25 000 դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 30 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 33-Ա

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2016 թվականի վարձատրության չափը սահմանել 320 000 (երեք հարյուր քսան հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 34-Ա

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված
Գետամեջ համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 14-ի
N 34-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Աշխատակիցների քանակը՝ 7
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 320 000 | - | - | 320 000 |
| 2. | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 170 000 | - | - | 170 000 |
| 3. | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 180 000 | - | - | 180 000 |
| 4. | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 175 000 | - | - | 175 000 |
| 5. | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 175 000 | | | 175 000 |
| 6. | | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 85 000 | - | - | 85 000 |
| 7. | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 75 000 | - | - | 75 000 |
| | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | **7** | **1 180 000** | **-** | **-** | **1 180 000** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2015 թվականի N 35-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 14-ի N 35-Ն որոշման

## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

## ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ

